ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753, (055) 002595 akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 16-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Աշխատանքային օրենսգրքի>> 5-րդ, 164-րդ հոդվածներով և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետով՝

որոշում եմ՝

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների և ՀՈԱԿ-ների տնօրենների 2020 թվականի ամենամյա արձակուրդների տրամադրման հերթականությունը (նախնական գրաֆիկը)՝ համաձայն հավելվածների:
2.Սույն որոշման մասին տեղեկացնել աշխատակազմի աշխատողներին, ՀՈԱԿ-ների տնօրեններին:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753, (055) 002595 akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 17-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 2019թ. հոկտեմբերի 11-ի << ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 60-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Նեղոց գյուղի բնակիչ ԱԶ Ռուզաննա Վերանյանի հայտը՝

որոշում եմ՝

1.Թույլատրել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Նեղոց գյուղի բնակիչ ԱԶ Ռուզաննա Վերանյանին 2020թ. հունվարի 01-ից մինչև 2020 թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2. Հարկատուներից գանձել համապատասխան տեղական տուրքեր:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**